



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հեռ. 093 476682

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» հուլիսի 2017թ. N 14

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և առաջնորդվելով Խնկոյան համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 14-ի «Խնկոյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի <<Խնկոյան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>>» թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 21-Ն որոշումով՝

որոշում եմ

1. Հաստատել Խնկոյան համայնքի 2017 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը համաձայն /հավելված 1, 2/:
2. Հաստատել համայնքի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:
3. Ուժը կորցրած ճանաչել Խնկոյան համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 26-ի <<2017 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը հաստատելու մասին>> թիվ 2 որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Վ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

